**Հավելված 6**

«ՀՀ ԱՄ ԹՀ-ՀԲՄԽԾՁԲ-26/15» ծածկագրով

Հրավերի բաց մրցույթի հրավերի

# ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԱ-ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԵՎ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

№ «ՀՀ ԱՄ ԹՀ-ՀԲՄԽԾՁԲ-26/15»

ք. Թալին «18» 03 2026թ.

*Թալինի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Տավրոս Սաֆեյանի,* որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և *<<Ամելի>>ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Ամալյա Դավթյանի,* որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ***Թալինի համայնքապետարանի կարիքների համար նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման և մատուցման*** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:[1]

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինելու ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.[2]

բ)Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

---

[1] *Եթե գնման առարկա է հանդիսանում շինարարական ծրագրերի կազմման նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցումը, ապա «մատուցվում է» բառից հետո լրացվում է «քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին և» բառերը*

[2] *Եթե գնման առարկա է հանդիսանում շինարարական ծրագրերի կազմման նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցումը, ապա 2.1.2 կետի «ա» պարբերությունը շարադրվում է հետևյալ խմբագրությամբ. «Չընդունել ծառայությունը և սահմանել ողջամիտ ժամկետ՝ ոչ պատշաճ ծառայությունը պայմանագրով նախատեսված պահանջներին համապատասխան (անհատույց) մատուցելու և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքն ու 5.3 կետով նախատեսված տույժը»*

* *լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:[3]

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:[4]

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին հանձնելու փաստը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով

---

[3] Հանվում է պայմանագրից, եթե մատուցվելիք ծառայությունը չի վերաբերում շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի քաղաքաշինական փորձաքննության իրականացմանը:

[4] Եթե գնման առարկա է հանդիսանում շինարարական ծրագրերի կատարման [illegible] նախագծային փաստաթղթերի [illegible] մատուցումը, ապա պայմանագրի նախագծի 3.1 կետը 2-րդ նախադասությունից հետո լրացվում է հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ, «Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում մատուցված և Պատվիրատուին ներկայացված ծառայության արդյունքի քաղաքաշինական ընդունումն իրականացվում է, եթե Կատարողը ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները այդ թվում նորմատիվատեխնիկական և հաստատված շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպմանը, կահավորմանը , տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը և Պատվիրատուին [illegible] կողմից շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, ներկայացվել գրավոր հավաստում՝ ամենօրյա ռեժիմով [illegible] սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ կառավարման և տեխնիկական անվտանգության, հարմարվողականության միջոցառումները) նորմերը պահպանած կամ չպահպանված լինելու վերաբերյալ:Ընդ որում հավաստման մեջ մանրամասն ներկայացվում են կանոնները և/կամ նորմերը չպահպանելու փաստը հավաստող հիմքերը:»:

Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է ***1 530 000 (մեկ միլիոն հինգ հարյուր երեսուն հազար ) ՀՀ դրամ***, որից

*1-ին չափաբաժին 150 000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ*

***2-րդ չափաբաժին 250 000 (երկու հարյուր հիսուն հազար)ՀՀ դրամ***

*3-րդ չափաբաժին 750 000 (յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ*

***4-րդ չափաբաժին 380 000(երեք հարյուր ութսուն հազար)ՀՀ դրամ***

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի —ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում.[5]

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[5] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայության մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝

---

*Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:[7]

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[8]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նպատակով իրականացված կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը: Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում սույն

---

[8] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

ենթակետի կիրառման դեպքում գործակալ չի կարող հանդիսանալ ՀՀ կառավարության 20.06.2025թ. թիվ 817-Ա որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված ցուցակում ներառված կազմակերպությունը:[9]

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:[10]

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:
Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական [illegible] ծագող դրամական օրենսգրքի 40-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով [illegible] ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի ((Հայտնիետ՝ պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի ((Հայտնիետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվ[illegible]րկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը[11]

7.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

---

[9] Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:

[10] Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:

7.14 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.16 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար տվյալ կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից -----աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:[12]

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
| --- | --- |
| Ծաղկին համայնքապետարան | <<Անելի>> ՍՊ |
| ՀՀ Արագածոտնի մարզ, գ.Ծաղկին Գայի 1 | Ք.Երևան Ալեկ 4 փ 1 նրբ տ 39 |
| ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն | Ակբաբանկ ԲԲԸ |
| ՀՀ 900462151045 | Հ/Հ 220593356823000 |
| ՀՎՀՀ 05030561 | ՀՎՀՀ 00249916 |
| Համայնքի ղեկավար՝ Տ.Սահինյան | Տնօրեն՝ [illegible] |
| ______________ (ստորագրություն) | ______________ (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

______________________

Հավելված N 1
“8” 03 2026թ. կնքված
«ՀՀ ԱՄ ԹՀ-ՀԲՄԽԾՁԲ-26/15» ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | Մատակարարման: հասցեն | Մատակարարման: ժամկետը** |
| 1 | 71241200 | ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի ք. Թալինի գերեզմանատների հանգստյան ծածկի կառուցման աշխատանքների նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ձեռքբերում | դրամ | | 150 000 | 1 | Արագածոտն մարզ, ք.Թալին | Պայմանագրի կնքման պահից 30 օր: |
| 2 | 71241200 | ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Արագածավան բնակավայրի մանկապարտեզում ջեռուցման համակարգի անցկացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման պայմանագիր | դրամ | | 250 000 | 1 | Արագածոտն մարզ, գ. Արագածավան | Պայմանագրի կնքման պահից 30 օր: |
| 3 | 71241200 | Թալին համայնքի Արագածավան բնակավայրում խմելու ջրի մաքրման, փափկեցման, հաշվառման և ավտոմատ քլորացման մոդուլային կայանի կառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայությունների | դրամ | | 750 000 | | Արագածոտն մարզ, գ. Արագածավան | Պայմանագրի կնքման պահից 30 օր: |
| 4 | 71241200 | Խմելաջրի մաքրման, հաշվառման և ավտոմատ քլորացման մոդուլային կայանի կառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայությունների | դրամ | | 380 000 | | Արագածոտն մարզ, ք.Թալին | Պայմանագրի կնքման պահից 30 օր: |

* Ծառայությունների մատուցման վերջնաժամկետը չի կարող лինել ավելի ուշ, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Տեխնիկական բնութագիրը/չափաբաժին 1/

| | | |
|---|---|---|
| 1 | Նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների անվանումները և հիմնանորոգման ենթակա տեղամասերը | Արագածոտնի մարզի Թալին համայնքի համար գերեզմանատների հանգստյան ծածկոցի կառուցման տիպային նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ձեռքբերման |
| 2 | Կատարվող աշխատանքներ | *« նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ »* |
| 3 | Տարածքների չափերը և նախատեսվող աշխատանքները | Թալին համայնքում գերեզմանատանը մետաղական հիմքով հանգստյան ծածկոցի իրականացում: Հիմքի արտաքին չափերը 6400մմ*6400մմ, հատակի հատվածը բազալտե երեսպատումով, մետաղական կարկասով, գունավոր տանիքի թիթեղով, գագաթի հատվածում բացվածքը, բոլոր երկշերտ լամեր ապակիով համաձայն կից էսքիզների |
| 4 | Հետազննման և նախագծի նկատմամբ պահանջներ | Չափագրական և հետազոտման իրականացում նախահաշվային փաստաթղթերի կազմում:<br>Հետազոտման ընթացքում իրականացնել տեղամասի առկա վիճակի տեսանկարահանում:<br>Նախահաշվային փաստաթղթերի մշակելիս առաջնորդվել ՀՀ Կառավարության 23.06.2011թ-ի 879-Ն որոշման 8-րդ հավելվածով հաստատված շինարարական աշխատանքների արժեքների հաշվարկման կարգով;<br>Նախագծողը պետք է ունենա համապատասխան աշխատանքներն իրականացման լիցենզիաներ: |
| 5 | Նախագծի կազմի նկատմամբ պահանջները | նախահաշվային փաստաթղթերը պետք է ներառեն՝<br>ա/Բացատրագիր<br>բ/Գծագրեր<br>գ/Նախահաշվի հիման վրա կազմված ծավալաթերթ-նախահաշիվ, որի յուրաքանչյուր աշխատանքի միավորի արժեքը կներառի ՀՀ քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերով սահմանված բոլոր ծախսերը, շահույթը, ինչպես նաև բոլոր տարրերը վճարները և հարկերը, կնքված և ստորագրված նախագծողի կողմից<br>դ/նախահաշիվ<br>ե/ծավալաթերթ<br>ը/ Նախահաշիվը ներկայացնել 3/երեք/ օրինակից<br>· Նախահաշիվը ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով<br>· Ներկայացնել աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիաները, տեխնիկական միջոցները, աշխատանքային ռեսուրսները և մասնագիտական որակավորումները<br>.Նախահաշիվը ներկայացնել հայերեն և ռուսերեն տարբերակներով |
| 6 | Համաձայնեցումներ | Առաջարկվող նախագծային լուծումները համաձայնեցնել տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի հետ |

| *Աշխատանքների կատարման ժամկետը* | |
|---|---|
| *Սկիզբը* | *Ավարտը* |
| *Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից* | *Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 21-րդ օրացուցային օրը ներառյալ:* |

| Տեխնիկական բնութագիր/չափաբաժին 2/ | | |
|---|---|---|
| 1 | *Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների* անվանումները և հիմնանորոգման ենթակա տեղամասերը | կերել ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Արագածավան բնակավայրի մանկապարտեզում ջեռուցման համակարգի անցկացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման |
| 2 | Մատուցվող ծառայություններ | « նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայություններ » |
| 3 | Տարածքների չափերը և նախատեսվող աշխատանքները | Արագածավանի Գրիբայեդով 34 հասցեի մանկապարտեզ ընդհանուր հողամասը 0,43հա |
| 4 | Հետազննման և նախագծի նկատմամբ պահանջներ | Չափագրական հետազոտության իրականացում և նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում: Հետազոտման ընթացքում իրականացնել տեղամասի առկա վիճակի տեսանկարահանում: Նախագծային փաստաթղթերը պետք է համապատասխանեն ՀՀ պետական ստանդարտներին, |

| | | |
|---|---|---|
| | | երահանգներին, քաղաքաշինական նորմերին և պահանջներին․ Տեղագրագեոդեզիական հետազննման իրականացման ГОСТ 32869-2014-ի ստանդարտներով սահմանված պահանջների և ՀՀ-ում գործող ցերատեսչական նորմատիվ իրավական փաստաթղթերի համաձայն։<br>• Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմել քաղաքաշինական նորմերի պահանջներին համապատասխան։<br>• Նախահաշիվը կազմել ՀՀ կառավարության 23.06.2011թ.-ի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան։<br>• նախագծանախահաշվային փաստաթղթերի աշխատանքային գծագրերը մշակել ГОСТ 21,701-2013, ГОСТ 21,101-97, ГОСТ 21,501-93 ստանդարտներով սահմանված կանոններով և ՀՀ-ում գործող ցերատեսչական այլ նորմատիվային փաստաթղթերի համաձայն։<br>- Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմել ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշմամբ «ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» պահանջներին համապատասխան։<br>·Նախահաշիվը կազմել ՀՀ կառավարության 23.06.2011թ.-ի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան։<br>Նախագծողը պետք է ունենա համապատասխան աշխատանքների իրականացման լիցենզիաներ։ |
| 5 | Նախագծի կազմի նկատմամբ պահանջները | Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը պետք է ներառեն<br>ա/Բացատրագիր<br>բ/Գծագրեր<br>գ/Նախահաշվի հիման վրա կազմված ծավալաթերթ-նախահաշիվ, որի յուրաքանչյուր աշխատանքի միավորի արժեքը կներառի ՀՀ քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերով սահմանված բոլոր ծախսերը, շահույթը, ինչպես նաև բոլոր տուրքերը վճարները և հարկերը, կնիքված և ստորագրված նախագծողի կողմից<br>դ/նախահաշիվ<br>ե/ծավալաթերթ<br>զ/համաձայնություններ<br>Ե/ Նախագիծը ներկայացնել 4/չորս/ օրինակից<br>• Նախագիծը ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով<br>• Ներկայացնել աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիաները, տեխնիկական միջոցները, աշխատանքային ռեսուրսները և մասնագիտական որակավորումները<br>. Նախագիծը ներկայացնել հայերեն և ռուսերեն տարբերակներով |
| 6 | Համաձայնեցումներ | Առաջարկվող նախագծային լուծումները համաձայնեցնել տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի հետ |

| Ծառայությունների մատուցման ժամկետ | |
|---|---|
| Սկիզբ | Ավարտ |
| Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 25-րդ օրացուցային օրը ներառյալ |

| Տեխնիկական բնութագիր/չափաբաժին 3/ | | |
|---|---|---|
| 1 | Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների անվանումները և հիմնանորոգման ենթակա տեղամասերը | Ծաղին համայնքի Արագածավան բնակավայրում խմելու ջրի մաքրման, փաթեթավորման, հաշվառման և ավտոմատ քլորացման մոդուլային կայանի կառուցման աշխատանքների Նախագծա-Նախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայությունների. |
| 2 | Մատուցվող ծառայություններ | «Նախագծա-Նախահաշվային փաստաթղթերի կազմում և խորհրդատվական ծառայությունների մատուցում» |
| 3 | Տարածքների չափերը և նախատեսվող աշխատանքները | • Արագածավան գյուղի տարածքում գտնվող 2 գործող արտեզյան խորքային հոր, |

| | | |
|---|---|---|
| | | • յուրաքանչյուր հորի համար նախատեսված պոմպային հանգույց,<br>• ջրի մաքրման և վարակազերծման համակարգեր,<br>• **2 մոդուլային տնակ,**<br>• հորերից մինչև գյուղի ներքին բաշխիչ ցանց ձգվող մուտքային ջրատարներ:<br>• Յուրաքանչյուր հորի համար նախատեսել **նոր խորասուզվող պոմպ,**<br>• Պոմպերը պետք է նախատեսված լինեն **շարունակական շահագործման** համար, աշխատանքային խորություն՝ **առնվազն 120 մ,** Համապատասխանություն ՀՀ տեխնիկական կանոնակարգերին և IEC ստանդարտներին<br>Մանրամասները ներկայացված է կից տեխնիկական բնութագրում |
| 4 | Հետազննման և նախագծի նկատմամբ պահանջներ | • Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմել քաղաքաշինական նորմերի պահանջներին համապատասխան:<br>• Նախագծանախահաշվային փաստաթղթերի աշխատանքային գծագրերը մշակել ՀՀ-ում գործող գերատեսչական նորմատիվային փաստաթղթերի համաձայն:<br>- Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմել ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշմամբ «ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» պահանջներին համապատասխան:<br>•Նախահաշիվը կազմել ՀՀ կառավարության 23.06.2011թ.-ի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան:<br>Նախագծողը պետք է ունենա համապատասխան աշխատանքներն իրականացման լիցենզիաներ: |
| 5 | Նախագծի կազմի նկատմամբ պահանջները | Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը պետք է ներառեն՝<br>ա/Բացատրագիր<br>բ/Գծագրեր<br>գ/Ինժեներաերկրաբանական եզրակացություն (որն իր մեջ կներառի տեղեկատվություն՝ կլիմայի, ռելյեֆի, շրջանի սեյսմիկ և քնահողերի սեյսմիկ հատկությունների, քնահողերի տեսակները ըստ փխրեցման կարգի, ջրաբանությունը և ջրաերկրաբանությունը, տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի հետ համաձայնեցված պահոատի, լցակույտի և շինարարական աղբի տեղերի, օգտագործվող հանքանյութերի հանքերի տեղերի վերաբերյալ),<br>ե/Նախահաշվի հիման վրա կազմված ծավալաթերթ-նախահաշիվ, որի յուրաքանչյուր աշխատանքի միավորի արժեքը կներառի ՀՀ քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերով սահմանված բոլոր ծախսերը, շահույթը, ինչպես նաև բոլոր տուրքերը վճարները և հարկերը, կնիքված և ստորագրված նախագծողի կողմից<br>զ/Նախահաշիվ<br>է/ծավալաթերթ<br>ը/չափագրություններ<br>*թ/ Նախագիծը ներկայացնել 4/չորս/ օրինակից*<br>• Նախագիծը ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով<br>• Ներկայացնել աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիաները, տեխնիկական միջոցները, |

| | | |
|---|---|---|
| | | աշխատանքային ռեսուրսները և մասնագիտական որակավորումները<br>-Նախագիծը ներկայացնել հայերեն և ռուսերեն տարբերակով<br>ՆԱԽԱԳԾԻ ԼՐԱՄՇԱԿՈՒՄ<br>Ըստ անհրաժեշտության, եթե պատվիրատուի նախաձեռնությամբ իրականացվող քաղաքաշինական պարզ փորձաքննության արդյունքներով տրվել է եզրակացություն, հետևյալ ձևակերպմամբ «Նախագիծը վերադարձվում է լրամշակման», նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակումն իրականացվում է առանց ֆինանսական փոխհատուցման՝ առավելագույնը 10-օրյա ժամկետում:<br>**12. Ծառայության Գումարը վճարվում է նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության դրական եզրակացություն առկայության պարագայում:** |
| 6 | Համաձայնեցումներ | տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի,հետ, ինչպես նաև շահագրգիռ ենթակառուցվածքների հետ |

| *Ծառայությունների մատուցման ժամկետը* | |
|---|---|
| *Սկիզբը* | *Ավարտը* |
| *Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից* | *Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 30-րդ օրացուցային օրը ներառյալ:* |

| **Տեխնիկական բնութագիր/չափաբաժին 4/** | |
|---|---|
| Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների անվանումները և հիմնավորգման ենթակա տեղամասերը | Խմելաջրի մաքրման, հաշվառման և ավտոմատ քլորացման մոդուլային կայանի կառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայությունների |
| Մատուցվող ծառայություններ | «Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում և խորհրդատվական ծառայությունների մատուցում» |
| Տարածքների չափերը և նախատեսվող աշխատանքները | • Մետաղական կոնստրուկցիա՝ ջերմամեկուսացված պատերով (միեռկաթա կամ այլ համարժեք):<br>• Ներքին չափերը՝ **մոտ 2.5×3.0 մ** (կամ պատվիրատուի կողմից սահմանված չափեր) I<br>• Սալիկապատ կամ հակասահող հատակ:<br>• Էլեկտրամատակարարում 220V, առանձին ավտոմատ անջատիչով:<br>• Արտաքին և ներքին լուսավորություն:<br>• Բնական կամ մեխանիկական օդափոխություն:<br>• Մուտքի դուռ՝ փակման հուսալի համակարգով:<br>Մանրամասները ներկայացված են կից տեխնիկական բնութագրով |
| Հետազննման և նախագծի նկատմամբ պահանջներ | • Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմել քաղաքաշինական նորմերի պահանջներին համապատասխան:<br>• նախագծանախահաշվային փաստաթղթերի աշխատանքային գծագրերը մշակել ՀՀ-ում գործող գերատեսչական նորմատիվային փաստաթղթերի համաձայն:<br>- Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմել ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշմամբ «ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» պահանջներին համապատասխան:<br>•Նախահաշիվը կազմել ՀՀ կառավարության 23.06.2011թ.-ի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան: |

| | |
|---|---|
| | Նախագծողը պետք է ունենա համապատասխան աշխատանքների իրականացման լիցենզիաներ: |
| Նախագծի կազմի նկատմամբ պահանջները | Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը պետք է ներառեն՝<br>ա/Բացատրագիր<br>բ/Գծագրեր<br>գ/ինժեներաերկրաբանական եզրակացություն (որն իր մեջ կներառի տեղեկատվություն՝ կլիմայի, ռելյեֆի, շրջանի սեյսմիկ և բնահողերի սեյսմիկ հատկությունների, բնահողերի տեսակները ըստ փխրեցման կարգի, ջրաբանությունը և ջրաերկրաբանությունը, տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի հետ համաձայնեցված պահուստի, լցակույտի և շինարարական աղբի տեղերի, օգտագործվող հանքանյութերի հանքերի տեղերի վերաբերյալ),<br>ե/Նախահաշվի հիման վրա կազմված ծավալաթերթ-նախահաշիվ, որի յուրաքանչյուր աշխատանքի միավորի արժեքը կներառի ՀՀ քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերով սահմանված բոլոր ծախսերը, շահույթը, ինչպես նաև բոլոր տուրքերը վճարները և հարկերը, կնիքված և ստորագրված նախագծողի կողմից<br>զ/Նախահաշիվ<br>է/ծավալաթերթ<br>ը/չափագրություններ<br>թ/ Նախագիծը ներկայացնել 4/չորս/ օրինակից<br>• Նախագիծը ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով<br>• Ներկայացնել աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիաները, տեխնիկական միջոցները, աշխատանքային ռեսուրսները և մասնագիտական որակավորումները<br>.Նախագիծը ներկայացնել հայերեն և ռուսերեն տարբերակով<br>ՆԱԽԱԳԾԻ ԼՐԱՄՇԱԿՈՒՄ<br>Ըստ անհրաժեշտության, եթե պատվիրատուի նախաձեռնությամբ իրականացվող քաղաքաշինական պարզ փորձաքննության արդյունքներով տրվել է եզրակացություն, հետևյալ ձևակերպմամբ «Նախագիծը վերադարձվում է լրամշակման», նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակումն իրականացվում է առանց ֆինանսական փոխհատուցման՝ առավելագույնը 10-օրյա ժամկետում:<br>12. Ծառայության Գումարը վճարվում է նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության դրական եզրակացության առկայության պարագայում: |
| Համաձայնեցումներ | <u>տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի հետ, ինչպես նաև շահագործող ենթակառուցվածքների հետ</u> |

| Ծառայությունների մատուցման ժամկետը | |
|---|---|
| Սկիզբը | Ավարտը |
| Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից | Պայմանագրին ուժի մեջ մտնելու օրվանից 30-րդ օրացուցային օրը ներառյալ: |

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**
Ծաղինի համայնքապետարան
Ք.Ծաղին Գայի 1
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
ՀՀ 900462151045
ՀՎՀՀ 05030561
Համայնքի ղեկավար՝ Տ.Սահակյան

(ստորագրություն)

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
<<Ամիլի>> ՍՊԸ
Ք.Երևան Ավան Ավան 4փ 1նրբ տ 39
Ակբա բանկ ԲԲԸ
Հ/Հ 220593336823000
ՀՎՀՀ 00249[illegible]
Տնօրեն Անուշ [illegible]

(ստորագրություն)

Հավելված N 2

« » 2026 թ. կնքված

«ՀՀ ԱՄ ԹՀ-ՀԲՄԽԾՁԲ-26/15» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 71241200 | Կառուցում՝ ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Վ.Սասնաշեն բնակավայրի Վերին Սասնաշեն բնակավայրում գազամատակարարման ներքին ցանցի ընդլայնման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայությունների | | 150 000 | 150 000 | 150 000 | 150 000 | 150 000 | 150 000 | 150 000 | 150 000 | 150 000 | 150 000 | 150 000 | 150 000 |
| 2 | 71241200 | Կառուցում, ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Դիան բնակավայրի ջրամատակարարման արտաքին ցանցի հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայությունների | | 250 000 | 250 000 | 250 000 | 250 000 | 250 000 | 250 000 | 250 000 | 250 000 | 250 000 | 250 000 | 250 000 | 250 000 |
| 3 | 71241200 | Թալին համայնքի Արագածավան բնակավայրում խմելու ջրի մաքրման, դեզինֆեկցման, հաշվառման և ավտոմատ քլորացման մոդուլային կայանի կառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայությունների, | | 750 000 | 750 000 | 750 000 | 750 000 | 750 000 | 750 000 | 750 000 | 750 000 | 750 000 | 750 000 | 750 000 | 750 000 |
| 4 | 71241200 | Խմելաջրի մաքրման, հաշվառման և ավտոմատ քլորացման մոդուլային կայանի կառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայությունների | | 380 000 | 380 000 | 380 000 | 380 000 | 380 000 | 380 000 | 380 000 | 380 000 | 380 000 | 380 000 | 380 000 | 380 000 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Թալինի համայնքապետարան

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Թալին, Գայի 1

Բանկը՝ ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն

ՀՀ [illegible]

ՀՎՀՀ 05030561

Համայնքի ղեկավար՝ [illegible]

/ստորագրություն/

**ԿԱՏԱՐՈՂ**

<<Ամելի>> ՍՊԸ

Ք.Երևան, [illegible] 39

[illegible] բանկ ՓԲԸ

ՀՀ 220593336923800

ՀՎՀՀ 00249915

Տնօրեն՝ [illegible]

/ստորագրություն/

# Վճարման հանձնարարական N 16339

Ամսաթիվ/Ժամ 18 մարտ 2026թ. 12:42 Կատարողի ՊԿ 2630

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ...րող | «ԱՄԷԼԻ» ՍՊԸ | | | ԴԵԲԵՏ | Գումարը(թվերով) |
| ...նող | 99 00249916 ՀՎՀՀ | | | h.N | |
| ...արողի ...կը | «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ «Կենտրոն» մասնաճյուղ<br>ք. Երևան | Կոդ<br>22059 | | 3336823000 | 160,000.00 AMD |
| ...հառու | Հայտի եվ պայմանագրի ապահովումը բանկային երաշխիքով | | | ԿՐԵԴԻՏ | |
| ...դ | | | | h.N | |
| ...ահառուի ...նկ | ՀՀ կենտրոնական բանկ<br>ք. Երևան | Կոդ<br>10300 | | 900008000664 | |

...ումարը տառերով՝ Մեկ հարյուր վաթսուն հազար Դրամ 00 լումա

...պատակ Պայմանագրի ապահովում պայմանագրի համար NՀՀ ԱՄ ԹՀ - ՀԲՄԽԾՁԲ-26/ 15 (մրբայլ բանկինգ 219922539)

...ահառուին վճարման ամսաթիվ

...ջնորդավճար 100 ՀՀ դրամ

...Տ. | Հաճախորդի ստորագրությունները ✓

Բանկը ձևակերպել է

Բանկի ստորագրությունները

Կատարման ամսաթիվ՝
18/03/26

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ «ACBA BANK» OJSC
1 8 MAR 2026
ՎՃԱՐՎԱԾ Է «ԱՐՄԵՆԻԱ»
BRD 22041 12

eFO 72-03-02/3#3